02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

2 (1401) • 18 հունվարի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Աշխատանքային հանդիպում ոստիկանությունում

Հունվարի 11-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում, որին մասնակցում էին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը, բնապահպանության նախարարի պաշտոնակատար Էրիկ Գրիգորյանը, Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանը եւ այլ պաշտոնյաներ:

Քննարկվեցին դեկտեմբերի 20-ից մեկնարկած Սեւանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում անցկացվող համատեղ հատուկ միջոցառումների արդյունքներն ու խնդիրները:

Կողմերը կարեւորեցին համագործակցությունն առավել սերտացնելու անհրաժեշտությունը:

Քննարկվեցին Սեւանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում անցկացվող համատեղ հատուկ միջոցառումներին նոր թափ հաղորդելու եւ ծառայությունն ու վերահսկողությունն ուժեղացնելու վերաբերյալ հարցեր:

Բոլորը միակարծիք էին, որ Սեւանա լիճը մեր երկրի ազգային հարստությունն է, եւ իրականացվող միջոցառումներն ուղղված են ոչ միայն ձկնատեսակի պահպանմանը, այլեւ էկո եւ պարենային անվտանգության ապահովմանը:

Որոշվեց շարունակել Սեւանա լճում ձկնորսների դրած բոլոր ցանցերի դուրսբերումը, լրացուցիչ միջոցներ ձեռնարկել բացառելու լողամիջոցների ու որսագործիքների մուտքը լիճ, ուժեղացնել ծառայությունը Սեւանա լճի հարակից տարածքում տեղակայված պահակետերում ու հայտնաբերել հանրապետության բնակավայրերում սիգի վաճառքի դեպքերը:

Միջոցառումներից եւ Սեւանա լճում սիգ ձկնատեսակի պաշարի վերագնահատումից հետո, ձկան բավարար քանակի հաստատման դեպքում, կքննարկվի արդյունագործական ձկնորսության թույլտվության հարցը:

Ուժեղացված ծառայության արդյունքները

27-ը դեկտեմբերի, 2018 թվական: Հանրապետության հրապարակ:

Ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը ոստիկանության արտաքին ծառայություն իրականացնող ստորաբաժանումների շարային ստուգատեսին հրամայեց անցնել շուրջօրյա ուժեղացված ծառայության՝ ներկայացնելով իր պահանջները. հասարակական կարգն ապահովելիս հանդուրժողականություն չդրսեւորել օրինախախտների նկատմամբ, ապահովել քաղաքացիների եւ հյուրերի անվտանգությունը, վերահսկողություն սահմանել ճանապարհներին, ոչ սթափ վիճակում գտնվող վարորդները պետք է հայտնաբերվեն ու ենթարկվեն վարչական պատասխանատվության:

էջ 2

Պետբյուջե է վերադարձվել 708 միլիոն դրամ

2018 թվականի մայիսի 8-ից մինչեւ տարվա վերջ միայն ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության գործողությունների արդյունքում պետական բյուջե է վերադարձվել ավելի քան 708 միլիոն դրամ:

Բյուջե վերադարձված գումարը հիմնականում գոյացել է պետական, համայնքային մարմիններում եւ մասնավոր ընկերություններում կատարված յուրացումների եւ չարաշահման դեպքերը բացահայտելու շնորհիվ:

Սպանություն բացահայտվեց

Հունվարի 15-ին, ժամը 13.20-ին, «Սպիտակ» բժշկական կենտրոնից ոստիկանության Սպիտակի բաժին հաղորդում ստացվեց, որ որովայնի հրազենային վիրավորումով բուժօգնության է տեղափոխվել 40-ամյա Գարուշ Մարությանը, որը, գիտակցության չգալով, մահացել է:

Նույն օրը «Վանաձոր» բժշկական կենտրոնից հաղորդեցին ոստիկանության Տարոնի բաժին, որ հրազենային վնասվածքով հիվանդանոց է տեղափոխվել մի քաղաքացի:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ Սպիտակ քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի ԱՊՊԱ գրասենյակներից մեկում կատարվել է սպանություն:

Դեպքի առթիվ քրեական օրենսգրքի 104 եւ 235 հոդվածներով հարուցվել է քրեական գործ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումներով պարզվեց սպանություն կատարողի ինքնությունը: Նա կալանավորվել է:

Ձեռնարկվում են միջոցառումներ դեպքի մյուս մասնակիցների ինքնությունը պարզելու եւ դեպքի հանգամանքները ճշտելու ուղղությամբ:

Ծեծկռտուք ու կրակոցներ

Հունվարի 13-ին, ժամը 14-ի սահմաններում, ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնում էր, որ Վաղարշյան փողոցում մի մեքենայից կրակել են մարդկանց ուղղությամբ:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի օպերատիվ խումբը նշված վայրում իրականացրեց անհրաժեշտ գործողություններ՝ տեղի ունեցածի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Պարզվեց, որ որպեներ առաջ վիճաբանություն, հետո ծեծկռտուք է եղել, եւ մասնակիցներից մեկը կրակոցներ է արձակել:

Ձշտվեց վիճաբանողների ինքնությունն ու գտնվելու վայրը: Նույն շենքի բակից, խուլիգանություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկվեցին Տիգրան Եսայանը, Դավիթ ու Արման Բրուտյանները, իսկ Արթուր եւ Սպարտակ Սարգսյանները բերման ենթարկվեցին Բաջանյան փողոցից:

Մինչ ոստիկանները բերման էին ենթարկում կասկածյալներին, հիվանդանոցից ոստիկանության Արաբկիրի բաժնում հնչեց ահազանգ, որ բուժօգնության է դիմել 18-ամյա Արամ Սարգսյանը: Պարզվեց, որ նա մարմնական վնասվածքներ էր ստացել նույն ծեծկռտուքի ժամանակ:

Ոստիկանությունում պարզվեց, որ բերման ենթարկվածները նույն բակի բնակիչներ են, իսկ վիճաբանությունը ծագել էր մեքենան կայանելու հարցի պատճառով: Վիճաբանությունը վերածվել էր ծեծկռտուքի: Արթուր Սարգսյանը գազային ատրճանակից կրակոցներ էր արձակել, Դավիթ Բրուտյանը՝ դանակով, Սպարտակ Սարգսյանը՝ մուրճով, իսկ մյուսները ձեռքերով ու ոտքերով մարմնական վնասվածքներ էին պատճառել իրար:

Հարուցվել է քրեական գործ:

Դանակահարություն Երեւանում

Հունվարի 2-ին հիվանդանոցից ոստիկանության Արաբկիրի բաժին ահազանգ ստացվեց. գոտկային շրջանի եւ ձեռքի մատների կտրած-ծակած վերքերով բուժօգնության էր տեղափոխվել մի երիտասարդ:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները մեկնեցին հիվանդանոց, սակայն տուժողն ի վիճակի չէր բացատրություն տալու: Ոստիկանները կասկածներ ունեին, որ նա դանակահարվել է:

Կասկածները կարճ ժամանակ անց հաստատվեցին: Պարզվեց՝ հունվարի 2-ին, ժամը 12.20-ի սահմաններում, Ադոնցի փողոցում տեղի ունեցած վիճաբանության ընթացքում երիտասարդը դանակահարվել էր:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ դանակահարությունը հնարավոր է կատարած լինի Երեւանի բնակիչ, 28-ամյա Հայկ Մինասյանը: Նա հայտնաբերվեց եւ մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժին:

Նախապատրաստվում են նյութեր:

Խաբելու մեխանիկան

Պարտավորվել էր կատարել վարկային պարտականությունները, սակայն խոստումը մնացել էր օդի մեջ:

էջ 3

«Հանցագործ» կատուներ

Կատվին բռնելուց հետո պարզվեց, որ նրա վզնոցին ամրացված են մարիխուանայի փաթեթներ:

էջ 5

Սպանություն հոգեհացից հետո

Դացկերույթի մասնակիցների մեծ մասը հեռացել էր, իսկ մի քանիսը մնացել էին, որ տաղավարը մաքրեն:

էջ 6

Պայքար ապօրինի անտառահատումների դեմ

Ապօրինի ծառահատումը հանցագործություն է շրջակա միջավայրի անվտանգության դեմ: Անօրինական հատված յուրաքանչյուր ծառի համար հաշվարկվում է պետությանը պատճառված նյութական վնասի չափը, ըստ որի՝ ծառահատը տուգանվում կամ ազատազրկվում է: Բայց էկոլոգիային պատճառված վնասն անհատույց է: Կտրած ծառը նորից չես տնկի: Մնում է միայն հուսալ, որ ժամանակի ընթացքում հատված ծառաբնից նոր շիվեր աճեն: Խնդրի լուծմամբ շահագրգիռ գերատեսչությունների առաջնային նպատակը կանխումն է: Իսկ արդեն կատարված հանցագործության կրկնությունը բացառելու համար կա մեկ ճանապարհ՝ բացահայտումը: Անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ, ուստի ոստիկանության գերխնդիրներից է անպատժելիությունը բացառելը:

Հունվարի 10-ին ապօրինի անտառահատումների դեմ լայնածավալ միջոցառում անցկացվեց: Ոստիկանության Տավուշի մարզային վարչության եւ ենթակա ստորաբաժանումների ծառայողները ուժեղացված ծառայություն իրականացրին սպասարկվող տարածքում: Ստուգումներ անցկացվեցին փայտամշակման արտադրամասերում, ճշտվեցին վերամշակվող փայտանյութի ձեռք բերման աղբյուրները: Ուսումնասիրվեցին նաեւ ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու վերաբերյալ օպերատիվ տեղեկությունները:

Միջոցառման արդյունքում արձանագրվեց ակնհայտ հանցավոր ճանապարհով գույք ձեռք բերելու եւ ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության տասնութ դեպք: Ներկայացնենք մի քանիսը:

Ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողները Գետահովիտ գյուղի փայտամշակման արտադրամասում հայտնաբերեցին 2,2 մետր երկարությամբ եւ լայնությամբ, 3 մետր բարձրությամբ դասավորված տարբեր հաստությունների կողահատ տախտակներ եւ 2 խմ վառելափայտ: Չորանոցում հայտնաբերվեցին 5 մետր երկարությամբ, 2 մետր լայնությամբ եւ 3 մետր բարձրությամբ դասավորված կողահատ տախտակ:

Գանձաքար գյուղի արտադրամասում հայտնաբերեցին 2,2 մետր երկարությամբ, 16-74 սմ տրամագծով հաճարենու 145, իսկ թխկու՝ 22, 30 եւ 34 սմ տրամագծով, նույն երկարության 3 գերան: Հայտնաբերվեց նաեւ հաճարենու փայտանյութ:

Իջեւան քաղաքի Երեւանյան փողոցի փայտամշակման արտադրամասում հայտնաբերվեց հաճարենու 13 խմ տախտակ, 2,2 խմ վառելափայտ, 5 խմ երեսաթափ, շուրջ 200 պարկ փայտի թեփ, 2,2 մետր երկարությամբ 16 գերան եւ բեռնատար՝ բարձված 11 խմ հաճարենու գերաններով:

Ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություններ ունեին, որ Վարդանանց գյուղի բնակիչ Արտակ Թումանյանը իր առանձնատան առաջին հարկում զբաղվում է փայտամշակման ապօրինի գործունեությամբ: Զննության արդյունքում հայտնաբերվեցին կիսաշեն աթոռներ, կահույքի անավարտ դետալներ, փայտամշակման եւ կահույքագործության գործիքներ:

Ոստիկանության Դիլիջանի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումներով Կամոյի փողոցի 1-ին նրբանցքի փայտամշակման արտադրամասում հայտնաբերվեց սոճու 28 գերան եւ տարբեր չափսերի 24 հատ եւ 3,3 խմ դասավորված տախտակ:

Վերջում արձանագրենք ուժեղացված ծառայության ընթացքում հայտնաբերված փայտանյութի ընդհանուր թվերը՝ առանց ներկայացված նախորդ դեպքերի:

Հայտնաբերվել են հաճար, կաղնի, սոճի, բոխի եւ լորենի ծառատեսակների շուրջ 360 շինափայտ, տախտակ եւ գերան, 420 խմ տախտակ, գերան, վառելափայտ, մանրահատակ եւ այլ փայտանյութ: Հայտնաբերվել են 1400 արկղ, կահույք եւ կահույքի դետալներ: Հայտնաբերվել են նաեւ փայտածխի եւ փայտի վերամշակման անօրինական արտադրամասեր:

Արձանագրված դեպքերով նախապատրաստվում են նյութեր:

Անտառի պահպանությունը դժվար է: Կան տեղամասեր, որոնք 10 կիլոմետրից ավելի երկարություն ունեն եւ տասնյակ մուտքեր՝ դեպի անտառ: Անտառային սակավ պաշարները պարբերական հատումներով ոչնչացնելու դեպքում տարիներ հետո էկոլոգիական աղետի վտանգն անխուսափելի կլինի: Ապօրինի ծառահատումները բացառելու ուղղությամբ ոստիկանության վճռական գործողությունները եւ ուժեղացված ծառայությունները կրելու են շարունակական բնույթ:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Ուժեղացված ծառայության արդյունքները

Սկիզբը՝ էջ 1

Քրեական հետախույզների, համայնքային ոստիկանների, անչափահասների գործերով ծառայողների, պարեկայինների 24-ժամյա ուժեղացված ծառայության մեկնարկի առաջին օրվանից բացահայտվեցին սեփականության դեմ ուղղված հանցագործության բազմաթիվ դեպքեր: Պարեկող ոստիկանների աչալրջության ու պրոֆեսիոնալիզմի արդյունքում մի շարք անձինք հայտնաբերվեցին հանցանք կատարելիս: Բացահայտվեցին մարմնական վնասվածք հասցնելու եւ ծեծի դեպքեր՝ կանխելով հնարավոր ծանր հետեւանքները: Հայտնաբերվեցին ու վարչական պատասխանատվության ենթարկվեցին անձինք, որոնք խախտելով լռությունը՝ գիշերային ժամերին իրավառություններ էին իրականացրել:

Ուժեղացվեց հսկողությունը հասարակական նշանակության ռիսկային օբեկտների, մասնավորապես՝ բանկերի, տարադրամի փոխանակման կետերի, գրավատների, խոշոր դրամաշրջանառություն ունեցող առեւտրի կետերի, դեղատների եւ այլ տարածքներում: Ընդգծենք, որ իրականացված ծառայության շնորհիվ նշված հաստատություններում տեղի չունեցան ավազակություններ ու կողոպուտներ՝ ի տարբերություն նախորդ տարիների: Ուժեղացված ծառայության մաս կազմեց ոստիկանների պրոֆիլակտիկ բնույթի այցելությունները տարադրամի փոխանակման կետեր, գրավատներ, շուրջօրյա գործող դեղատներ՝ պատասխանատուների եւ աշխատակիցների հետ կանխարգելիչ զրույցներ վարելու եւ հնարավոր հանցագործությունները նախականխելու համար խորհուրդներ տալու նպատակով:



Ոստիկանության ուժեղացված ծառայությունը նույն հետեւողականությամբ շարունակվում է նաեւ հետտոնական օրերին: Ոստիկաններն իրենց ներկայությամբ եւ աչալրջությամբ քաղաքացիների անվտանգությունն են ապահովում մարդաշատ վայրերում՝ ամեն քայլափոխի պիտանի լինելով նաեւ զբոսաշրջիկներին:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել եւ դարձվում ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանը: Տոնական օրերին ճանապարհային ոստիկանությունն իրականացրեց աննախադեպ ուժեղացված ծառայություն: Վալերիյ Օսիպյանի հրահանգները հստակ էին՝ խիստ լինել օրինախախտների նկատմամբ, բարեհամբույր՝ օրինապահների հանդեպ: Մայրաքաղաքում եւ մարզերում շուրջօրյա ուժեղացված ծառայություն իրականացրած ճանապարհային ոստիկանների ուշադրության կենտրոնում ալկոհոլ օգտագործած վիճակում, սահմանված արագության գերազանցմամբ վարող, երթեւեկության մասնակիցների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորող եւ նրանց կյանքն ու առողջությունը վտանգող, երթեւեկության կանոնները չարամտորեն խախտող վարորդների հայտնաբերումն էր: Ճանապարհային ոստիկանների աչալուրջ ծառայության արդյունքում հունվարի 1-ից 7-ը կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 1630 արձանագրություն՝ 1147-ով ավելի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Հայտնաբերվել է 225 ոչ սթափ վարորդ. անցած տարի հունվարի 1-ից 7-ը հայտնաբերվել էր ընդամենը 9-ը: Ճանապարհային ոստիկանները նաեւ եղանակային բարդ պայմաններում եղել են վարորդների կողքին:

Կյանքը փոխօգնությամբ է գեղեցիկ, իսկ ոստիկանի առաքելությունը մարդասիրական է, խնդիրը՝ ապահովել մարդու կյանքի եւ առողջության, իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանությունը հանցավոր եւ հակաիրավական ոտնձգություններից:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Լաերտ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Լաերտ Միքայելյանը:

Ծնվել է 1938 թ. հունիսի 30-ին, Ախուրյանի շրջանի Ազատան գյուղում: Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո 1972-ին ընդունվում է ներքին գործերի համակարգ՝ սկսելով որպես անչափահասների գործերով տեսուչ: Առաջին լուրջ փորձությամբ (յոթերորդ դասարանի աշակերտը սպանել էր համադասարանցուն. այդ գործի բացահայտման համար երիտասարդ սպան արժանանում է պատվոգրի եւ առաջ քաշվում) հաստատվում է ապագա քրեական հետախույզի ուղին:

Խորհրդային շրջանի ՆԳ բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետի պաշտոնից Լաերտ Միքայելյանը 1980 թվականին նշանակվում է Քանաքեռ-Զեյթունի նորաստեղծ ՆԳ բաժանմունքի պետ եւ պաշտոնավարում մինչեւ 1990 թվականը:

1990-1993 թթ. աշխատում է ՆԳՆ քրեական հետախուզության վարչությունում՝ որպես բաժնի պետ:

Ծանր տարիներ էին: Աշխուժացել էր հանցաշխարհը, եւ փորձառու օպերատիվ աշխատողն այնտեղ էր, որտեղ փորձում էին խախտել օպերատիվ իրավիճակի կայունությունը: Երեք տարի աշխատում է Էրեբունու ՆԳ բաժնում՝ որպես պետի՝ օպերատիվ գծով տեղակալ:

Հանցագործ աշխարհի դեմ պայքարի հաջորդ ճակատը 26 կոմիսարների շրջանում էր, որտեղ նույնպես ՆԳ բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալն էր:

Աշխատասիրություն, համառություն, կամք ու նվիրում պահանջող ծառայության եզրագիծը հատում է 1999-ի վերջին՝ Շենգավիթի ՆԳ բաժնում՝ դարձյալ որպես ՆԳ բաժնի պետի՝ օպերատիվ գծով տեղակալ:

Բարեկիրթ, սրտացավ պատրաստակամ, սկզբունքային, պրոֆեսիոնալ. այսպիսին են հիշում Լաերտ Միքայելյանին գործընկերները: Այդպիսին էլ կմնա ճանաչողների հիշողության մեջ:

Ռազմիկ ՍԻՄՈՆՅԱՆ

Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Ռազմիկ Սիմոնյանը:

Ծնվել է 1938 թվականի սեպտեմբերի 7-ին, Վարդենիսում:

Բանակում ծառայելուց հետո սովորել է Երեւանի իրավաբանական ֆակուլտետում:

1967 թվականին համալսարանն ավարտելուց հետո, որպես քննիչ, ընդունվել է ներքին գործերի համակարգ: Հետագայում եղել է Կրասնոսելսկի շրջանի (Ճամբարակի) ներքին գործերի բաժնի պետի տեղակալը:

1990 թվականին անցել է վաստակած հանգստի:

Բարեխիղճ ծառայության համար բազմիցս արժանացել է խրախուսանքի, իսկ ամենամեծ խրախուսանքը եղել է գործընկերների շրջանում վայելած հարգանքն ու հեղինակությունը:

Օրինակելի, պատրաստակամ մարդու, սկզբունքային սպայի, վստահելի գործընկերոջ հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների հիշողության մեջ:

Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ

Խաբելու մեխանիկան



Խարդախելու, ստելու երեւույթները առկա են բազմաթիվ հարաբերություններում: Ինչ-ինչ պատճառներից ելնելով՝ ստել կարող են բոլորը, բայց կան մարդիկ, որոնց համար խաբելը դառնում է մասնագիտություն: Եթե սուտ մատնությունը գիտակցաբար կեղծ տեղեկատվություն տրամադրելն է, որի համար պատիժ նախատեսում է քրեական օրենսգրքի 333 հոդվածը, ապա խաբելը, եթե կատարվում է ուրիշի գույքը հափշտակելու կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով, սեփականության դեմ ուղղված հանցագործություն է, օրենքն այն անվանում է խարդախություն, իսկ պատիժ նախատեսում է քրեական օրենսգրքի 178 հոդվածը: Խարդախության սուբյեկտիվ կողմերից մեկն այն է, որ կատարվում է ուղղակի դիտավորությամբ. հանցագործը գիտակցում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը: Հանցագործությունից առաջ խարդախն ուսումնասիրում է զոհին: Նախ՝ ընտրում է մարդու, որը հոգեբանական կամ սոցիալական տեսանկյունից խոցելի է. նման մարդկանց հեշտ է խաբել, նրանք հեշտ են ընկնում ուրիշի ազդեցության տակ:

2018 թ. անցած տասնմեկ ամիսներին ոստիկանության տարբեր բաժիններում խարդախության 2180 դեպք է գրանցվել. բացահայտվել է 2080-ը:

Առանձնացնենք այլ մարդու անվան տակ կամ ուրիշի անձնագրով ապօրինի գործարք կնքելու կամ բանկից վարկ վերցնելու մի քանի դեպք:

Ոստիկանություն դիմած 38-ամյա քաղաքացին հայտնում էր, որ ոմն Վարդան Մաթեւոսյան բանկերից մեկում իր անունով մեկ միլիոն դրամի դիմաց կատարել է գրավադրում՝ վեց ամսում պարտքը մարելու պայմանով, սակայն չարաշահելով վստահությունը՝ տիրացել է գումարին: Ոստիկանություն դիմած մի կին էլ հայտնում էր, որ իր եղբոր անունով ոմն Մարինե Գրիգորյան բանկից վերցրել է երկու միլիոն դրամի վարկ եւ չի մարել գումարը:

Երկու դեպքով էլ նյութեր են նախապատրաստվում:

Լինում են դեպքեր, երբ խարդախները զոհից ոչ թե անձնագիր, այլ թանկարժեք իրեր են վերցնում: Օրինակ, ոստիկանության Շենգավիթի բաժին դիմած 44-ամյա կինը հայտնում էր, որ իր մտերիմ Սմբատ Առուստամյանը վերցրել է իր ոսկյա զարդերը, ուրիշի անունով գրավադրել բանկում, ստացել է երեք միլիոն դրամ վարկ եւ խաբեությամբ տիրացել գումարին:

Լինում են դեպքեր, երբ հանցագործն ու տուժողը բարեկամներ են:

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն դիմած քաղաքացին հայտնում էր, որ քրոջ որդին ու բանկի աշխատակից նրա ընկերը, չարաշահելով իր վստահությունը, նույն բանկում իր անունով գրավ են դրել կեղծ ոսկեղեն, դրա դիմաց ստացել երկու միլիոն դրամ եւ հրաժարվում են վճարել վարկը:

Դեպքեր են լինում, երբ գործարքի համար ներկայացված անձնագիրը խարդախի կողմից օգտագործվում է այլ նպատակով:

Ոստիկանություն դիմած 31-ամյա տղամարդը հայտնում էր, որ նոտարական գրասենյակներից մեկի աշխատակից Գոհար Ասատրյանը, թարգմանություն կատարելու պատրվակով, վերցրել է իր 55-ամյա հոր անձնագիրը, իսկ հետո հայտնել է, թե այն կորցրել է: Այնինչ փոխելով անձնագրի լուսանկարը եւ կեղծելով ստորագրությունը՝ տարաժամկետ վճարման պայմանով պայմանագիր է կնքել մի քանի բջջային օպերատորների հետ, ձեռք է բերել հեռախոսներ՝ տուժող քաղաքացուն պատճառելով 500 հազար դրամի վնաս:

Ներկայացվող դեպքում հանցագործության թիրախ է դարձել տուժողի բնակարանը:

Ոստիկանության Էրեբունու բաժին դիմած քաղաքացին հայտնում էր, որ բարեկամ Գեղամ Վարդանյանը իրեն պատկանող տունը գրավ է դրել բանկերից մեկում եւ չի կատարել վարկային պարտականությունները, ինչի հետեւանքով ինքը զրկվել է տան նկատմամբ սեփականության իրավունքից:

Ոստիկանություն դիմած 23-ամյա մի աղջիկ համակուրսեցու զոհն էր դարձել: Նրա խնդրանքով վարկային կազմակերպության միջոցով իր անվամբ մեքենա էր ձեռք բերել: Երիտասարդը պարտավորվել էր բարեխղճորեն կատարել վարկային պարտականությունները, սակայն խոստումը մնացել էր օդի մեջ: Գումարը չէր վճարել ու, մեքենայով հանդերձ, անհետացել էր:

Ասացինք՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքը հափշտակողները սովորաբար բավական ծանոթ են անձի հոգեբանությանը եւ ընտրում են մարդկանց, որոնք հոգեբանական կամ սոցիալական տեսանկյունից խոցելի են: Նրանց գործողություններից տուժող չդառնալու ճանապարհը պարզ է՝ մի՛ վստահեք անծանոթին, մի՛ տվեք անձնագիրը, սեփականության վկայականը որեւէ մեկին, որովհետեւ կարող եք դառնալ խաբեության զոհ: Եվ, ընդհանրապես, որեւէ գործարք կատարելիս խուսափեք անօրինականությունից:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ավազակային հարձակում Գետափում

Դեկտեմբերի 26-ի երեկոյան Վայոց ձորի մարզի Գետափ գյուղում ավազակային հարձակում էր կատարվել: Չորս դիմակավորված անձինք մտել էին տուն, ծեծել ամուսիններին, կապել նկուղում, դանակի ու ատրճանակի սպառնալիքի տակ հափշտակել էին կես միլիոն դրամ, խմիչք, համակարգիչ, հեռախոս ու պլանշետ:

Կատարվածի մասին ոստիկանության Եղեգնաձորի բաժնում տեղեկացան կեսգիշերին անց՝ օպերատիվ կառավարման կենտրոնից: Ուշ երեկոյան հարսանիքից տուն վերադարձած աղջիկն էր ծնողներին տեսել այդ վիճակում ու ոստիկանություն ահազանգել:

Րոպեներ անց օպերատիվ խումբը դեպքի վայրում էր: Հարձակման հետեւանքներն ակնհայտ էին: Տունն ամբողջովին տակնուվրա էին արել:

Որոնողական աշխատանքների ընթացքում քրեական հետախույզները տնից ոչ հեռու հայտնաբերեցին դիմակներ, ավելի ուշ՝ նաեւ գողոնը. չէր բացառվում, որ նրանց տեսնողներ էին եղել, գուցե՝ հետապնդողներ: Օպերատիվ հարցումների ընթացքում գյուղացիները հաստատեցին վարկածը, նաեւ նկարագրեցին, թե որ կողմ էին փախել հանցագործները:

Համապատասխան միջոցառումներից հետո քրեական հետախույզները, հանցագործությունը կատարելու կասկածանքով, Եղեգնաձորի Միկոյան փողոցից ոստիկանության Եղեգնաձորի բաժին բերման ենթարկեցին նախկինում տարբեր հանցագործությունների համար դատապարտված, Լոռու մարզի բնակիչներ Արեն Սարգսյանին եւ Բագրատ Ասոյանին:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գիշերաշրջիկ գողերը հայտնաբերվեցին

Հունվարի լույս 7-ի գիշերը ոստիկանության Կենտրոնական բաժնի սպասարկման տարածքում «Պորշ» մակնիշի ավտոմեքենայի լուսարձակների գողության դեպք արձանագրվեց: Գողությունը կատարվել էր Մելիք-Ադամյան փողոցում՝ 4.50-ի սահմաններում: Դիմակավորված անձինք տեխնիկական միջոցների գործադրմամբ հանել էին մեքենայի լուսարձակներն ու փախել: Տուժողին պատճառվել էր 480 հազար դրամի նյութական վնաս:

Դեպքի առթիվ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննության բաժանմունքում հարուցվեց քրեական գործ: Սկսվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ գողություն կատարած անձանց ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ: Մշակվեց բացահայտման միջոցառումների ծրագիր, որի իրականացմանը ներգրավվեցին նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները: Համատեղ աշխատանքի արդյունքում հանցագործությունը բացահայտվեց:

Պարզվեց, որ լուսարձակները գողացած անձինք Մելիք-Ադամյան փողոցից շարժվել էին Տիգրան Մեծի պողոտայի ուղղությամբ: Գիշերային շրջիկ ծառայություն իրականացնող պարեկային ավտոմեքենա տեսնելով՝ թաքնվել էին աղբամանների հետեւում: Մեքենայի հեռանալուն պես գողոնը թողել են աղբամանների մոտ ու շարժվել դեպի Սիեր Մկրտչյան փողոց: Որոշ ժամանակ անց վերադարձել էին ու վերցրել լուսարձակները:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները վերականգնեցին ոչ միայն դեպքի վայրում եւ հարակից տարածքում նրանց շարժը, այլեւ օպերատիվ ճանապարհով պարզեցին, թե Հանրապետության փողոցով ուր էին գնացել: Կազմակերպվեցին գիշերային դարանակալումներ:

Գողության հաջորդ օրը դիմակավորված անձանց ինքնությունը հայտնի էր: Հունվարի լույս 9-ի գիշերը կասկածյալ Արթուր Մեժլումյանը հայտնաբերվեց Մելքումովի եւ Գեւորգ Չաուշի փողոցների խաչմերուկում ու բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին: Արարատի մարզի Սուրենավան գյուղի բնակիչ Մեժլումյանը տվեց խոստովանական ցուցմունք:

Ժամեր անց մայրաքաղաքի Շինարարների փողոցում հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց նաեւ մյուս կասկածյալը՝ Կապանում հաշվառված Համազասպ Պետրոսյանը:

Հայտնաբերվեցին նաեւ գողացված լուսարձակները, որոնք թաքցրել էին Նորագավիթի 1-ին փողոցով անցնող երկաթգծի հարեւանությամբ:

Արթուր Մեժլումյանի խուզարկությամբ հայտնաբերվեց թմրամիջոցի նմանվող բյուրեղանման զանգված, որն ուղարկվեց փորձաքննության:

Հարուցվել է քրեական գործ:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Անասնագողության հետքերով

Դեկպեմբերի 22-ի առավոպյան Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի մի բնակիչ ահազանգեց ոսփիկանության Սեւանի բաժին. գիշերը, օգպվելով անասնագոմի դուռը կողպված չլինելու հանգամանքից, 12 գլուխ ոչխար ու մի այծ էին գողացել:

Օպերապիվ խումբը Չկալովկա մեկնեց: Դեպքի վայրն ուսումնասիրելուց ու պուժողից հաղորդում վերցնելուց հեպո իրավապահները սկսեցին իրականացնել որոնողական աշխապանքներ:

Օպերապիվ-հեպախուզական միջացառումների արդյունքում շուպով պեղեկություններ սպացվեցին, որ գողությունը հնարավոր է կապարած լինի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փողոցի բնակիչ Աշոպ Մարփիրոսյանը: Նույն օրը նա բերման ենթարկվեց ոսփիկանության Սեւանի բաժին:

Հեպագա միջոցառումներով պարզվեց, որ Աշոպ Մարփիրոսյանը մենակ չէր գործել: Գողությանը մասնակցել էր նաեւ Մարիեպա անունով մեկը՝ իր ընկերների հեպ: Ավելի ուշ քրեական հեպախույզները ճշպեցին կնոջ ինքնությունը՝ Էջմիածնի բնակչուհի Մարիեպա Խաչապրյան:

Դեկպեմբերի 25-ին հարազապների հեպ փարված բացապրական աշխապանքի արդյունքում Մարիեպա Խաչապրյանը ներկայացավ ոսփիկանության Սեւանի բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Սիրային» պատմություն

Դիլիջանցի Արսեն Գեւորգյանը համաքաղաքացի Արեւիկին սիրահարվելուց հետո մշտապես հանդիպում էր փնտրում: Ցանք չէր խնայում աղջկա մեջ իր նկատմամբ զգացմունքներ արթնացնելու համար: Աստիճանաբար սերը դարձավ փոխադարձ: Սիրող զույգին թվում էր, թե երջանկությունը իրենց մշտական ուղեկիցը կլինի: Սակայն ժամանակի ընթացքում տարբեր առիթներով սկսեցին վիճել: Սիրահարվածության չորս տարիների ընթացքում «շատ ջրեր հոսեցին», եւ Արեւիկը հիասթափության պահեր ապրելով՝ որոշեց վերջակետ դնել իրենց հարաբերություններին: Կապրեր առանց վեճերի, խաղաղ առօրյայով: Իր որոշման մասին հայտնեց Արսենին: Հասկանալով, որ Արեւիկը վճռական է տրամադրված՝ Արսենը սկսեց ճանապարհներ փնտրել նրա սիրտը շահելու համար: Սակայն արդյունքի հասնել չէր կարողանում:

Արեւիկը վարսահարդար էր եւ շուտով բացելու էր սեփական գեղեցկության սրահը: Նախապատրաստական աշխատանքները վերջին փուլում էին, երբ սրահ մտավ Արսենը՝ հերթական անգամ զրուցելու եւ հաշտվելու նպատակով: Սակայն վեճը դարձավ անխուսափելի, որի ընթացքում Արսենը խփեց Արեւիկին, ապա կոտրեց սեղանին դրված սպասքը:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները: Արսեն Գեւորգյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 118 եւ 185 հոդվածների 1-ին մասով նախատեսված հանցանք: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

«Ընկերական» նախատինք

Դիլիջանցի Հովսեփ Սողոմոնյանի եւ Միեր Հայրապետյանի ընկերությունը տարիների պատմություն ուներ՝ համեմված լավ ու վատ հիշողություններով: Միերը խաղային ապարատների նկատմամբ թուլություն ուներ, ինչը չէր ընդունում ընկերը: Միերը կարող էր ժամերով խաղալ, պարտվել, իսկ հաղթելու մասին խոսք չկար: Հովսեփը հորդորում էր հեռու մնալ կործանարար ուղուց, սակայն Միերն ընկերոջ ասածները «ականջին օղ չէր անում» եւ նույն ոգով շարունակում էր տանուլ տալ:

Մի օր էլ Հովսեփը Դիլիջանի օղակաձեւ խաչմերուկի հարակից տարածքում էր, երբ նկատեց խաղային ապարատի մոտ կանգնած ընկերոջը: Մոտեցավ ու փորձեց հերթական անգամ հասկացնել, որ ընտրած ուղին սխալ է: Սակայն Միերը շարունակեց խաղը ընկերոջ նախատինքների ուղեկցությամբ, ինչը վեճի առիթ հանդիսացավ: Հովսեփը ապտակեց Միերին:

Վիճաբանողներին նկատեցին տարածքում ծառայություն կատարող ոստիկանության Դիլիջանի բաժնի ՊՊՄ գնդի ծառայողները: Ընկերները հրավիրվեցին ոստիկանություն:

Հովսեփ Սողոմոնյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 118 հոդվածով նախատեսված հանցարարք, սակայն դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Խաղի գրեւարում

Տավուշի մարզի Հաղարծին համայնքի բնակիչ Մուշեղ Մաթեւոսյանի ու կնոջ՝ Մարինեի հարաբերությունները լարված էին, վեճերը՝ մշտական: Չնայած դրան՝ շարունակում էին համատեղ կյանքը:

Մուշեղը աշխատանք էր գտել Երեւանում: Գյուղ էր վերադառնում շաբաթը մեկ:

Այդ օրը Մարինեն տանը երեխաների հետ մենակ էր, երբ հյուր եկավ համագյուղացի Սամվելը: Սուրճ էին խմում, երբ դուռը թակեցին: Ամուսինն էր:

Մուշեղը Սամվելին տեսնելով՝ զարմացավ ու զայրացավ: Հարցին, թե ինչ է անում իր տանը՝ Սամվելը կցկտուր պատասխանեց.

- Մարիամի հետ պարզելու հարց կար:

Մուշեղը կնոջը կասկածեց անհավատարմության մեջ: Ինքը օրերով Երեւանում աշխատում է, մինչդեռ կինը համագյուղացու հետ սուրճ է ըմբոշխնում:

Վեճը գնալով թեժացավ: Մուշեղը մուրճով խփեց Սամվելի գլխին, ձեռքերով՝ կնոջը:

Կատարվածով ոստիկանության Դիլիջանի բաժնում նյութեր նախապատրաստվեցին:

Սամվելին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով, իսկ Մարինեի վնասվածքները թեթեւ վնասի հատկանիշներ չէին պարունակում:

Դիմողների բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ստորջրյա աշխարհի առեղծվածները

Սկիզբը՝ նախորդ համարում

1890 թ. շոտլանդացի ուսուցիչ Ուիլյամ Մոնրոն տեսել էր մի էակի, որի գլխին մազեր էին, ճակատը ուռուցիկ էր, դեմքը՝ ուռած, այտերը՝ վարդագույն, աչքերը՝ կապույտ, բերանն ու շուրթերը՝ մարդկանց նման: Կրծքերն ու փորը, ձեռքերն ու մատները՝ նույն չափի, ինչ մարդկային ցեղի ներկայացուցիչներինն են:

Ահա անգլիացի ճանապարհորդ Հենրի Հուդզոնի գրառումները՝ կատարված 17-րդ դարում. «Նավաստիներից մեկը նայելով ջրերին՝ ջրահարս տեսավ: Նրա կուրծքն ու մեջքը այնպիսին էին, ինչպես կանանցն է: Չափազանց ճերմակ մաշկ ուներ եւ ուսերին թափվող սեւ մազեր: Երբ սուզվեց, երեւաց պոչը, որը նման էր գորշ դելֆինի պոչի՝ պուտերով ծածկված»:

18-րդ դարի մի գրքում ջրահարսի նկար կա՝ հետեւյալ մակագրությամբ. «Սիրենայի նմանվող հրեշ, որին որսացել են Բոռնեոյի ափերին: Նրա երկարությունը 1,5 մետր է: Ցամաքում ապրեց 4 օր, 7 ժամ՝ ջրով լցված տակառում: Պարբերաբար մկան ծվոց հիշեցնող ձայն էր արձակում: Խեցգետիններ ու կակղա-

մորթներ չէր ուտում...»:

Չգիտես ինչու՝ ջրահարսերի ավելի շատ հանդիպում էին Շոտլանդիայում: 17-րդ դարի «Աբերդինյան ալմանախ»-ում հաստատվում էր, որ այդ կողմերում ճանապարհորդներն անպայման կհանդիպեն անսահման գեղեցիկ արարածների՝ ջրահարսերի հիասքանչ վտառի:

1890 թ. ալիքածեւ ոսկեգույն մազերով, կանաչ աչքերով, մարդու հասակի ջրահարսի հանդիպեց ճանապարհորդ Ալեքսանդր Գաննը: Այդ նույն տեղում հիսուն տարի անց ջրահարսի հանդիպեցին երկու աղջիկներ: Ըստ նրանց նկարագրության՝ նա Գաննի տեսած ջրահարսն էր:

1957 թ. ջրահարսի նմանվող մի արարած նույնիսկ ցատկել էր ճանապարհորդ Էրիկ դը Բիշոպի լաստանավակի վրա: Այդ տարօրինակ էակի ձեռքերը ծածկված էին թեփուկներով:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանից հետո ջրահարսերի հետ հանդիպումների հաճախականությունն սկսեց նվազել եւ մեր ժամանակներում արդեն կարելի է ասել՝ հասել է զրոյի:

Ծովային կանայք ոչնչացան, եւ հավանաբար դա կատարվեց համեմատաբար վերջին ժամանակներում՝ 19-րդ դարի կեսերին կամ վերջին: Պատճառը ձկնորսության աճն էր եւ ծովերի աղտոտումը:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Օղու դատարկ շշով

Ոստիկանություն է զանգել 63-ամյա Ալեքսանդրը եւ հայտնել, թե իրենց տանը մարդասպանություն է:

Պարզվել է, որ նրա 40-ամյա որդին, կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ, օղու դատարկ շիշը նետել է եղբոր 6-ամյա դստեր ուղղությամբ: Շիշը դիպել է աղջնակի դեմքին եւ վնասել շրթունքը:

Գանձապահը

ՍՊ ընկերության փաստաբանը հաղորդում է տվել, որ օգոստոսից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում սուպերմարկետի 27-ամյա գանձապահ Աննան վաճառած ապրանքի գումարը չի մուտքագրել դրամարկղ՝ յուրացնելով 900 հազար դրամ:

Նախկիններով

27-ամյա Առաքելը հաղորդում է տվել, որ երկու տարեկան որդուն լողացնելիս գլխին նկատել է այտուց, որը, իր կարծիքով, առաջացել է նախկին կնոջ կողմից երեխային ծեծելու հետեւանքով. տղան վերջին մեկ ամսում գտնվել էր նրա խնամքի տակ:

Հաղորդում է տվել նաեւ կինը: Նա հայտնել է, թե նախկին ամուսինը եկել է իրենց տուն եւ փորձել բռնաբարել իրեն:

Հանգամանքները պարզվում են:

Թափառող շան վրա՞...

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «սրունքի ծակված վերք, բաց բեկորային կոտրվածք» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել 60-ամյա Ալիկը:

Պարզվել է, որ նա վնասվածքը ստացել է ինքնաթիռների կայանատեղիում, երբ որսորդը թռիչքից առաջ կրակել է թռիչքուղում թափառող շների վրա:

Էմանսիպացիա

Գիշերը անհայտ քաղաքացուց ահազանգ է ստացվել, թե ոստիկան ուղարկեք, վիճաբանություն է:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ շենքի մուտքում, վիճաբանության ժամանակ, քույրեր Վարսիկն ու Հայկանուշը ծեծել են Ջենֆիրային՝ պատճառելով վնասվածքներ:

Վարսիկը ոչ սթափ վիճակում ներկայացվել է բաժին եւ բաց թողնվել: Ջենֆիրայից ընդունվել է հաղորդում: Ձեռնարկվում են միջոցառումներ Հայկանուշին հայտնաբերելու ուղղությամբ:

Շան պատճառով

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ որովայնի առաջնային պատի ծակած-կտրած վերքով բուժօգնության է դիմել 35-ամյա մի տղամարդ: Պարզվել է, որ տանը տղամարդու շունը ցատկել է նրա վրա, ինչի հետեւանքով նրա ձեռքում գտնվող դանակը դիպել է կրծքավանդակին՝ պատճառելով վնասվածք:

Մոր հարազատ աղջիկը

Ոստիկանություն է զանգել 43-ամյա Մանուշակը եւ հայտնել, թե 15 տարեկան դուստրը խփում է իրեն եւ կոտրում տան գույքը:

Ոստիկանները պարզել են, որ մայրը կենցաղային հարցերի շուրջ վիճել է 10-րդ դասարանցի դստեր հետ, ճանկռել է նրա պարանոցը, իսկ դուստրը քաշել է մոր մազերից:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունվարի 10-ից 17-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 35 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի, 1-ը՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման եւ դասալքությանը հանցակցելու, 5-ը՝ գողության, 1-ը՝ գողության փորձի, 5-ը՝ խարդախության, 2-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու, 2-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու, 1-ը՝ խուլիգանության եւ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու, 1-ը՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 64 ճանապարհատրանսպորտային պատահար. 3 մարդ զոհվել է, 86-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 14 դեպք. 1 մարդ զոհվել է, 13-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Հանրապետության ճանապարհներին

Հունվարի 13-ին Երեւանի Սիլիկյան թաղամասում իրար են բախվել «Մերսեդես», «ՎԱԶ-21061» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի վարորդը եւ 17-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունվարի 14-ին Երեւանի Սարալանջի փողոցում իրար են բախվել «Կիա» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Կիա»-ի վարորդը եւ «Տոյոտա»-ի 56-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունվարի 14-ին Երեւանի Բաղրամյան պողոտայում իրար են բախվել «Նիսան», «Ինֆինիտի» եւ «Հոնդա» մակնիշի ավտոմեքենաներ. «Հոնդա»-ի 46-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 14-ին «Օպել Աստրա-Ֆ» մակնիշի ավտոմեքենան Սպիտակ-Երեւան ճանապարհի 2-րդ կմ-ին ընկել է ձորակը. 43-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Դավիթաշենի 4-րդ թաղամասում բախվել է գովազդային վահանակի երկաթյա սյանը. վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին անհայտ ավտոմեքենայի վարորդը Երեւանի Խաղաղ Դոնի փողոցում վրաերթի է ենթարկել 71-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Տիչինայի փողոցում վրաերթի է ենթարկել 54-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին «Ֆոլքսվագեն Վենտո» մակնիշի ավտոմեքենան Վանաձորի Ուսանողական փողոցում դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել ծառին. 33-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Ստեփանավան քաղաքի Աշոտ Երկաթի փողոցում վրաերթի է ենթարկել 10-ամյա տղայի եւ իր մեքենայով նրան տեղափոխել հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին Հրազդան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցում իրար են բախվել «Օպել» եւ երկու «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ներից մեկի եւ «Օպել»-ի վարորդներն ու «Օպել»-ի 38-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին Գյումրի-Ամասիա ճանապարհի 7-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-21213», «ՎԱԶ-21230» եւ «Միցուբիշի Պաջերո» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ «ՎԱԶ-21230»-ի 55-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Տավուշի մարզի Բերդավան գյուղի վարչական տարածքում վրաերթի է ենթարկել 68-ամյա քաղաքացուհու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 15-ին «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենան Տավուշի մարզի Չորաթան գյուղում գլորվել է ձորը. երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Վաճառան գենետիկան

Չինգիզ խանը ոչ միայն անցյալի խոշորագույն զորավարներից է, այլեւ... սեքսուալ նվաճող: Գենետիկները նրա քրոմոսոմի հետքերը հայտնաբերել են համարյա երկու տասնյակ ազգությունների մեջ, որոնք բնակվում են Եվրասիայի տարածքում: Հետազոտողները դա բացատրում են մոնղոլ խանի այրական սկզբի զարմանալի ակտիվությամբ:

Մագադանի գիտությունների ակադեմիայի մի խումբ գիտնականներ հայտնաբերել են ժառանգաբանական հետքը, որն արմատներով հասնում է այդ անգուր ցեղապետին, որ ժամանակին ստեղծել է ամենամեծ կայսրություններից մեկը: Խոսքը Չինգիզ խանի քրոմոսոմի մասին է: Այն ժամանակ գիտնականները հայտնաբերեցին քրոմոսոմի մի խումբ փոխկապակցված գծեր, որոնք հորից անցնում են որդուն: Քրոմոսոմների այդ հավաքածուի կրողները, ինչպես հաշվարկել են գիտնականները, մոտ 16 միլիոն ժամանակակից տղամարդիկ են: Եթե այրական քրոմոսոմը բացարձակ անփոփոխ մնար, սերնդից սերունդ անցնելով՝ կարելի կլիներ հետեւել մարդու տոհմաբանությանը ընդհուպ մինչեւ ամենահեռավոր նախնիները, սակայն ժամանակի ընթացքում տեղի են ունենում քրոմոսոմի մուտացիաներ:

Y-քրոմոսոմի աննշան փոփոխությունները, որոնք անպայման կուտակվում են ժամանակի ընթացքում, թույլ են տվել հաշվարկել, որ ասիական շատ ժողովուրդների ներկայացուցիչների նախահայրը ապրել է մոտ հազար տարի առաջ:

Չինգիզ խանն ապրել է շուրջ 800 տարի առաջ եւ պաշտոնապես ունեցել է հինգ որդի, իսկ իրականում բացառված չէ, որ՝ շատ ավելի: Գիտնականների հաշվարկներով՝ արդեն 300 տարի անց Մեծ խանը կարող էր ունենալ 5 միլիոն ժառանգ:

Նկատի ունենալով ժողովուրդների պատմական վերաբնակեցումը եւ այն փաստը, որ արյունների միախառնումը տեղի է ունենում միայն որոշակի էթնիկական խմբերի միջեւ, այս քրոմոսոմները չէին կարող տարածվել մոնղոլական կայսրության սահմաններից դուրս: Հետազոտության շրջանակներում ընդգրկվել էր 1437 տղամարդ՝ 18 էթնիկական խմբերից, որոնք ապրել են Չինգիզ խանի մեծ մոնղոլական տերության սահմաններում: Այդ ժողովուրդների թվում են ալթայցի ղազախները, խաքասները, տուվացիները, տաջիկները, բուրյաթները, էվենկները, մոնղոլները, կալմիկները, քրդերը, պարսիկները, ռուսները եւ այլն: Գենետիկական նյութը վերցվել է հիմնականում աշակերտներից եւ ուսանողներից, ընդ որում, յուրաքանչյուր դեպքում դոնորը պիտի վստահաբար գիտենար, որ իր հայրն ու

հայրական գծով պապը պատկանում են տվյալ ժողովրդին (ասենք՝ երկուսն էլ բուրյաթներ են): Որպես գենետիկ նյութ օգտագործվել են դոնորի մազարմատները:

Ինչպես պարզվել է՝ Չինգիզ խանի ենթադրյալ ժառանգների 1/3-ից ավելին բնակվում է պատմական Մոնղոլիայի տարածքում: Ռուսաստանի բնակչության մեջ Չինգիզ խանի արյունն առավելապես կրում են Ալթայի ղազախները (8,3 %): Չինգիզ խանի գենետիկ ազդեցությունը 1,7-3,4 տոկոսով հայտնաբերվել է Ալթայի, Բուրյաթիայի, Տուվայի եւ Կալմիկիայի բնակիչների մեջ:

Ինչպես հայտնի է՝ շատ ռուսական նշանավոր տոհմեր արմատներով հասնում են թաթարական խաներին եւ արքայազուններին, որոնք ռուսական ծառայության մեջ էին: Օրինակ, Չաադաեւների տոհմը, ըստ ավանդության, ծագում է Չաղադալից՝ մեծ մոնղոլական նվաճողի որդիներից մեկից: Իսկ Գլինսկի բոյարներն իրենց տոհմաբանությունն սկսում են լեգենդար Մամայից՝ արյունը միախառնելով Դմիտրի Դոնսկոյի հետնորդ Իվան 4-րդի արյանը:

Արդյունքները վկայում են, որ ԴՆԹ-ի ընդամենը մեկ մոլեկուլ ունենալով՝ կարելի է պատմագիտական հետազոտություններ կատարել: Այսպես, մի խումբ անգլիացի գիտնականներ եւս հետազոտություն են հրապարակել, որից պարզ է դառնում, որ ներկայումս ասիական մայրցամաքում ապրող միլիոնավոր մարդիկ ընդհանուր գենետիկ նախնի ունեն:

Խմբի ղեկավար Քրիս Թայլեր-Սմիթի (Օքսֆորդի համալսարան) պնդմամբ՝ այդ նախնին ոչ այլ ոք է, եթե ոչ Չինգիզ խանը (1167-1227 թթ.) կամ, ավելի շուտ, նրա հորական պապը, որ ապրել է 1000 տարի առաջ:

Մոնղոլական կայսրությունը 13-րդ դարում ձգվում էր Չինաստանից մինչեւ Կասպից ծով, եւ 700 տարի անց էլ նրա գենետիկ հետքը հայտնաբերվում է ասիական բնակչության արական սեռի մեջ: Չինաստանում, Պարսկաստանում, Ուզբեկստանում եւ Մոնղոլիայում (նախկին Մոնղոլական կայսրության մասը) ապրող տղամարդկանց 8 տոկոսը այրական քրոմոսոմի բազմաթիվ ընդհանրություններ ունի: Քանի որ տղաների մոտ այդ քրոմոսոմային բնութագրերը սերնդեսերունդ փոխանցվում են առանց փոփոխության, գիտնականները իրավացի են՝ պնդելով, որ նրանք մի մարդուց են ծագում: Ումի՞ց: Սա մեծ հարց է, քանզի Չինգիզ խանը գաղտնի է թաղվել, նրա գերեզմանը մինչ այսօր հայտնաբերված չէ, եւ ԴՆԹ-ի կոդն անհայտ է: Ուստի այդ վարկածն առաջադրելու համար գենետիկան դիմում է նաեւ պատմագիտական հետազոտությունների:

Չինգիզ խանը հարեմ է ունեցել: Հաղթական արշավանքներից հետո նա պահանջում էր, որ պարտվածներն իրեն տային ամենագեղեցիկ կանանց: Նրա ավագ որդին հետ չէր մնում հորից. 40 որդի ուներ: Չինգիզ խանի թոռը, որ տիրում էր Չինաստանին, նույնպես բազմաթիվ հարճեր եւ 22 օրինական որդի է ունեցել:

Հասկանալի է, որ ժառանգների հայտնի թիվը կմեծանար, եթե գիտնականներին հայտնի լինեին նաեւ կանացի գծով ժառանգները: Ենթադրելի է, որ մոնղոլական «արգասավոր» խաները պետք է որ նույնքան էլ աղջիկներ ունեցած լինեն, որքան տղա են ունեցել, չնայած նահապետական հասարակական համակարգում նրանք նույն արժեքը չէին կարող ունենալ...

«Հանցագործ» կատուներ

Ժամանակակից կատուների կյանքը համեմատաբար տանելի է, քան ինկվիզիցիայի դարաշրջանում ապրած նրանց նախնիների, երբ ծայրահեղական հայացք ունեցող հոգեւորականները կատուներին որակում էին որպես «սատանայի ծառաներ», քանի որ իրենց «հանցավոր» գործունեությունը ծավալում էին գիշերները, էլ չենք խոսում գարնանային ոչ «բարոյական» պահվածքի մասին: Դա էր պատճառը, որ միջնադարում կատուներին անխնա ոչնչացնում էին, երբեմն էլ ողջ-ողջ այրում: Կատուների զգալի մասի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո Եվրոպայի բնակավայրերը հեղեղեցին զանազան կրծողներ, հատկապես առնետներ, որոնք տարածեցին այն ժամանակվա սարսափելի հիվանդություններից մեկը՝ ժանտախտը:

Դարեր անց կատուների նկատմամբ վերաբերմունքը փոխվեց: Այնուամենայնիվ փիսոները ժամանակ առ ժամանակ հայտնվում են իրավապահների ուշադրության կենտրոնում: Ճիշտ է, այժմ նրանց չեն մեղադրում սատանայի հետ կապերի մեջ, սակայն իրենց անսովոր գործունեությամբ հայտնվում են քրեագետների ուշադրության կենտրոնում, քանի որ «համագործակցում» են քրեական աշխարհի հետ:

Նոր Զելանդիայի Դանեդին քաղաքի բնակչուհին շտապ հրավիրում է ոստիկանների. կատուն զբոսանքից հետո տուն էր բերել մարիխուանայի փաթեթ ու հրամցրել տիրուհուն: Հետաքննությունը պարզեց, որ փաթեթում առկա է մոտ 5 գրամ մարիխուանա: Կատվին «չհարցաքննեցին», սակայն եզրակացրին, որ կարելի է կատուներին ընդունել ծառայության ու նրանց միջոցով հայտնաբերել թմրանյութեր:

Նորզելանդացի կատվի մոլդովացի «գործընկերոջ» բախտը, սակայն, չբերեց: Մոլդովայի բանտերից մեկի պահակները նկատել էին, որ ցանկապատի ճեղքից պարբերաբար բանտի տարածք էր մտնում մի կատու՝ տարօրինակ վզնոցով: Կատվին բռնեցին եւ պարզվեց, որ վզնոցին ամրացված են մարիխուանայի փաթեթներ:

Տարիներ առաջ բրազիլացի ոստիկանները բռնեցին մաֆիային ծառայող կատվի: Դա կատարվել է Պերնամբուկու նահանգի Արապիրկա քաղաքի բանտում: Կատուն «կալանավորվեց», երբ անցնում էր բանտի դարպասով: Պարզվեց՝ նրա մարմնի վրա ամրացված են եղել շաղափներ, փոքրիկ սղոցներ, բջջային հեռախոս՝ ականջակալներով:

Սիկտիվկարի աշխատանքային գաղութում պահակները հերթական շրջայցի ժամանակ արգելված գոտում բռնեցին կատվի, որի մեջքին ամրացված փաթեթներում բջջային հեռախոսներ եւ լիցքավորման համար նախատեսված սարքեր էին:

Շվեդիայի Պիտեո քաղաքում բնակվող Օսկար կատվին ոչ ոք չէր ուղղորդել հանցավորության: Ոստիկանները ահազանգ ստացան, որ բռնել են մի խոշորամարմին գող կատվի: Ինչպես պարզեց հետաքննությունը՝ ողջ ամառը բռնագրավել էր կատուների կերը՝ օգտագործելով «համոզման» բռնի միջոցներ: Վրդովված բնակիչները պահանջում էին խիստ միջոցներ կիրառել կատվի նկատմամբ, սակայն հայտնվում են տերերը եւ բնակիչներին ու ոստիկաններին հանդիսավոր խոստում են տալիս, որ կվերադաստիարակեն «իրավախախտին»:

Անգլիական Լուբոն քաղաքի Դենիզ անունով կատուն «մասնագիտացել» էր տարաբնույթ իրերի գողության մեջ: Մեկուկես տարվա ընթացքում Դենիզը կատարել էր 100-ից ավելի գողություն: Գողացված իրերը՝ կոշիկներ, տղամարդու վերնաշապիկներ, մանկական խաղալիքներ, խոհանոցային պարագաներ եւ այլն, հանձնում էր տիրուհուն: Դենիզի ամենացնցող գողությունը լոգարանի սրբիչն էր, ինչը քարշ էր տվել ողջ քաղաքով:

Տիրուհին հուսահատության մեջ էր եւ բոլորին փորձում էր համոզել, որ ինքը չի սովորեցրել կատվին գողություն անել. նույնիսկ հատուկ արկղ էր պատրաստել, որտեղ Դենիզից տուժածները կարող էին փնտրել իրենց կորած իրերը:

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Օպերատիվ

Իրականացվում են հատուկ միջոցառումներ

Այս օրերին Երեւան-Սեւան ճանապարհին ձկան, մասնավորապես՝ սիգի վաճառքի մասին հիշեցնում են միայն փակ ու լքված տաղավարները, քամուց ճոճվող ցուցափեղկերն ու ձուկ վաճառողի հայտնի մանեքենը: Սա մի քանի գերատեսչությունների աշխատանքի արդյունք է: Ոստիկանությունը, բնապահպանության նախարարությունը, Գեղարքունիքի մարզպետարանը, բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը դեկտեմբերի 20-ից սկսած՝ Սեւանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում անցկացնում են համատեղ հատուկ միջոցառումներ:

Մինչ միջոցառումների մեկնարկը, նշված գերատեսչությունների պատասխանատուները հանդիպումներ են ունեցել Սեւանա լճի շրջակա քաղաքների, համայնքների ղեկավարների ու ձկնորսների հետ: Նրանց պարզաբանել են միջոցառման նպատակն ու իրականացվելիք գործողությունները: Իսկ նպատակը մեկն է՝ արգելել Սեւանա լճում սիգի որսը՝ կապված ձկնատեսակի ձվադրման ժամանակահատվածի հետ:

Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ենթակա բաժինների՝ Սեւանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի եւ Մարտունու բաժինների ծառայողները 24 ժամ իրականացնում են ուժեղացված ծառայություն:Խիստ հսկողություն է սահմանված Սեւանը գոտեւորող բոլոր անտառային ճանապարհների վրա, տեղակայված են հսկիչ կետեր: «Սեւան» ազգային պարկի տարածքից դուրս են բերվել լողամիջոցներ, որսագործիքներ եւ ձկնորսների ժամանակավոր կացարաններ: Արգելվել է որսագործիքների եւ լողամիջոցների մուտքը Սեւանա լիճ:

Ոստիկաններն իրականացնում են նաեւ Սեւանա լճի սիգ ձկնատեսակի վաճառքի կանխարգելմանն ուղղված ստուգայցեր Երեւանի եւ մարզերի շուկաներում:

Ճանապարհներին հատուկ ռեժիմով ծառայություն են իրականացնում ճանապարհային ոստիկանները: Հսկիչ կետերում նրանք, ոստիկանության տարածքային բաժինների ու Սեւան ազգային պարկի աշխատակիցների հետ, կանգնեցնում են կասկածելի մեքենաները եւ ստուգում:

Մառայությունը հաճախ ստուգվում է նաեւ ղեկավարության կողմից:

Սեւանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածի հետ կապված հատուկ միջոցառումները կշարունակվեն մինչեւ հունվարի 20-ը:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Սպանություն հոգեհացից հետո

2017 թ. օգոստոսի 5-ին Դիլիջանի Գորկու 33 հասցեի տաղավարում 40-ամյա Հայկ Գուլանյանը, նրա հարեւաններ Արթուրը, վերջինիս հայր Արտակը, բարեկամ Հակոբը եւ այլ անձինք մասնակցում էին հարեւան Կարեն Մ.-ի հոգեհացի արարողությանը: Հացկերույթի մասնակիցների մեծ մասը արդեն հեռացել էր, իսկ վերը թվարկված հարեւանները մնացել էին սեղանը հավաքելու եւ տաղավարը մաքրելու համար:

Հայկ Գուլանյանը, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, հարցրել է՝ ինչո՞ւ իրեն ավելի շուտ չեն «խաբար արել», որ հուղարկավորությանն էլ մասնակցեր: Արթուր Ե.-ն պատասխանել է՝ թաղմանն ո՞վ է մարդ կանչում: Արթուրը Հայկին հորդորել է հանգստանալ, բայց Հայկը, ըստ դատական ակտի, ագրեսիվացել է: Արթուր Ե.-ն մոտեցել ու բռունցքով հարվածել է նրա աչքին: Հայկը սեղանից վերցրել է դանակն ու հարվածել Արթուրին: Արթուրն ընկել է: Նրա հայրը՝ Արտակը, գրկել է որդուն, փորձել է բարեկամի՝ Հակոբի հետ տանել դեպի ավտոկայանատեղի: Այդ ընթացքում Հայկ Գուլանյանը փորձել է խանգարել վիրավորի տեղափոխմանը, նա դանակով խփել է Արտակին ու Հակոբին: Արտակն ու Հակոբը իրենց հերթին խփել են Հայկին: Քիչ անց Արտակ Ե.-ի ահազանգով դեպքի վայր է ժամանել «շտապօգնությունը»: Արթուրին ու միջադեպի մյուս մասնակիցներին, այդ թվում՝ Հայկ Գուլանյանին տեղափոխել են հիվանդանոց, որտեղ Արթուր Ե.-ն ստացած վնասվածքից մահացել է:

Հայկ Գուլանյանին մեղադրանք է առաջադրվել դիտավորյալ սպանության, նաեւ մյուս տուժողների նկատմամբ բռնություն գործադրելու, նրանցից մեկի առողջությանը թեթեւ վնաս պատճառելու համար:

Հայկ Գուլանյանը հայտնել է, թե տեղյակ չի եղել, որ հարեւան Կարեն Մ.-ի հարազատները հոգեհացի արարողություն էին, ու «իրենց» թաղում ինչ-որ մի գյուղացու կոպիտ խոսքը չէր ներվելու:

Միջամտողը սկզբում մատուցողուհին էր. երիտասարդներին անուններով դիմելով՝ փորձեց հանդարտեցնել նրանց: Բայց՝ ապարդյուն: «Դու գործ չունես, հեռու մնա»՝ պահանջեցին ու սեղան, աթոռ շուռ տալով՝ սկսեցին գոռգոռալ «հանդուգն» գյուղացու վրա:

Աղմուկի վրա հավաքվեցին նաեւ խորտկարանի աշխատողները, բայց թաղեցի անբաններին զսպելն անհնար էր, մանավանդ, որ վատ տրամադրության պատճառով հակառակ կողմը հակադարձում էր:

Զսպեցին հաճախորդներից մեկի ահազանգով ժամանած ոստիկանները:

Պարզվեց՝ խուլիգանությամբ ինքնահաստատվելը Արտակ Սարգսյանի ու Հովհաննես Մկրտչյանի բուն գործն էր. երեք տարի առաջ շենքի բակում հասարակական կարգ էին խանգարել, հակառակորդ թիմից մեկի մեքենան վնասել ու ենթարկվել էին քրեական պատասխանատվության:

Փաստով հարուցված քրեական գործով նախաքննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Աշխատավորն ու պարապները

Ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախույզների բացահայտումը խուլիգանության դեպք է: Նախապատրաստված նյութերով քրեական գործ է հարուցվել: Մեղադրանք է առաջադրվել մայրաքաղաքի բնակիչներ Արտակ Սարգսյանին եւ Հովհաննես Մկրտչյանին:

Իսկ հիմա՝ ըստ էության:

Արմավիրի մարզի բնակիչ, 56-ամյա քարտաշ Սեդրակ Մելքոնյանը, օրվա ծանր աշխատանքից հոգնած, մտել էր մոտակա խորտկարան՝ ընթրելու, հոգնածությունը փոքր-ինչ թոթափելու: Տրամադրություն չուներ. գործատուն խոստացել, բայց չէր տվել աշխատավարձը, իսկ գյուղում բազմանդամ ընտանիքն այդ փողին էր սպասում, Ամանորի հետ կապված ծախսեր կային:

Աշխատավոր մարդը մտել էր խորտկարան, ուտելիք, հարյուր գրամ օղի պատվիրել ու ի՞նչ իմանար, որ անցնող օրը պարապությամբ լցրած երկու երիտասարդներ փչացնելու էին ընթրիքը, առանց այն էլ՝ վատ տրամադրությունը:

Նոր էր սկսել մի կտոր հաց ուտել, երբ հռհռալով ներս մտած ու նրա սեղանի կողքով անցնող երիտասարդներից մեկի կիսավերարկուի փեշը դիպավ ու շրջեց հանքային ջրով բաժակը: «Զգո՛ւյշ, ա՛յ տղա»,- գոռաց ու գլուխը կախ՝ շարունակեց ընթրիքը: Կոպիտ ասված «ա՛յ տղա»-ն հասցեատիրոջը դուր չեկավ, եւ մարդուն նեղություն տալու համար ներողություն խնդրելու փոխարեն շրջվեց ու, ձեռքը սեղանին խփելով, պահանջեց իր հետ «կարգին» խոսել: «Գործիդ գնա»՝ եղավ հոգնած աշխատավորի պատասխանը: Ի՞նչ իմանար, որ նրանց դեպքում գործը անգործությունն էր, իրենք «թաղի տղա»

Բնակարանային գողությունը բացահայտվեց

Հունվարի 5-ին Լոռու մարզի Դսեղ գյուղում բնակարանային գողություն էր կատարվել: Հյուրասենյակի պատուհանի ապակին կոտրելով՝ մտել էին տուն, սենյակները փակնուվրա արել, ննջարանից հափշտակել փող ու ոսկեղեն՝ տուժողին պատճառելով մոտ կես միլիոն դրամի վնաս:

Դեպքից ժամեր անց կատարվածի վերաբերյալ ոստիկանության Թումանյանի բաժնում ահազանգ ստացվեց: Տանտերերը երեք ժամով էին տնից բացակայել. Վանաձոր էին մեկնել հարազատների Նոր տարին շնորհավորելու, այդ ընթացքում էլ կատարվել էր դեպքը:

Դսեղ մեկնած իրավապահներն ուսումնասիրեցին տան տարածքը, արձանագրեցին՝ որտեղից ինչ են գողացել: Տանտերերը որեւէ մեկին չէին կասկածում: Նրանց Վանաձոր տեղափոխած ու երեք ժամ անց կրկին Դսեղ բերած տաքսու վարորդից բացի ոչ ոք չգիտեր, որ տնից բացակայելու էին:

Վարորդի այլուրեքությունը հստակ էր. նրանց պետք է Վանաձորում սպասեր, բայց արդյո՞ք սպասել էր:

Ուսումնասիրվեցին Դսեղ տանող ճանապարհի օբյեկտների տեսահսկող սարքերի տեսագրությունները: Պարզ երեւում էր, թե «ՎԱԶ-2107» մակնիշի տաքսին ուղեւորներին Վանաձոր տեղափոխելուց հետո ինչպես է Դսեղ վերադառնում ու որոշ ժամանակ անց կրկին դուրս գալիս գյուղից:

Վարորդը Վանաձորի բնակիչ Հայկ Հակոբյանն էր, որին հունվարի 7-ին իրավապահները նախ բերման ենթարկեցին ոստիկանության Տարոնի, ապա՝ Թումանյանի բաժին: Քննչական փորձարարության ժամանակ նա ներկայացրեց, թե ինչպես է տուն մտել, որտեղից ինչ է գողացել:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Աշխատանքի հրավեր ոստիկանությունում

ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կրտսեր խմբի թափուր պաշտոններում ծառայության անցնելու համար հրավիրվում են.

- Հայաստանի Հանրապետության մինչեւ 30 տարեկան արական սեռի այն քաղաքացիները, ովքեր անցել են պարտադիր զինվորական ծառայություն, ունեն առնվազն միջնակարգ կրթություն, իրենց անձնական հատկանիշներով, առողջական վիճակով եւ ֆիզիկական պատրաստականությամբ ունակ են կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները,

- ՀՀ ոստիկանությունում եւ այլ գերատեսչություններում զինվորական ծառայություն անցած, վերջին 5 տարիների ընթացքում ծառայությունից ազատված արական սեռի նախկին ծառայողները:

Ցանկացողները կարող են դիմել ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կադրերի եւ անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժին (ք. Երեւան, Խանջյան 51, հեռ. 010 59-62-78, 010 59-69-91) յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10.00-ից մինչեւ 13.00-ն եւ 14.00-ից մինչեւ 17.00-ն:

«Վնասարար» պաշտոնյան

Քրեական օրենսգրքի 309 հոդվածը պատիժ է նախատեսում պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար: Հոդվածի նկարագրական մասում հանցատեսակն այսպես է ներկայացված՝ պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից եւ էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակական կամ պետական օրինական շահերին: Օրենքի լեզվով դա պաշտոնեական լիազորություններն անցնել է նշանակում, օրենքի սահմանած պատիժն էլ համարժեք է պատճառված վնասին: Արարքը պատժվում է՝ սկսած նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով տուգանքից մինչեւ չորս տարի ժամկետով ազատազրկումը:

Պատիժը խիստ է, եթե նույն արարքը անզգուշաբար առաջացրել է ծանր հետեւանքներ: Այս դեպքում պատիժը տասը տարի ժամկետով ազատազրկումն է:

Ներկայացվող դեպքը կատարվել է ամիսներ առաջ: Նախաքննական մարմինն ավարտեց քրեական օրենսգրքի 309 հոդվածով հարուցված քրեական գործի քննությունը: Այն արդեն դատաքննության փուլում է: 309 հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել բնապահպանական պետական տեսչության տարածքային բաժիններից մեկի պետին:

Պայմանականորեն Սուրեն Ստեփանյան կոչենք 48-ամյա մեղադրյալին: Դանդիսանալով պաշտոնատար անձ՝ նա չարաշահել է պաշտոնեական լիազորությունները, ինչի արդյունքում պետությանը պատճառվել է յոթ միլիոն դրամի նյութական վնաս:

Իսկ հիմա՝ ըստ էության: Փակ բաժնետիրական ընկերություններից մեկի թափուկատարը վթարի էր ենթարկվել: Վթարի հետեւանքով մոտ հազար հինգ հարյուր քառակուսի մետր հողատարածք աղտոտվել էր, արդյունքում՝ շրջակա միջավայրին պատճառվել էր մոտ տասնչորս միլիոն դրամի նյութական վնաս:

Բնապահպանական պետական տեսչության տարածքային բաժնի պետը ՓԲ ընկերության տնօրենին կից գրությամբ ուղարկել էր վթարի հետեւանքով պատճառված վնասի արձանագրությունն ու հաշվարկը՝ մեկամսյա ժամկետում տասնչորս միլիոն դրամը պետական բյուջե մուծելու պահանջով: Միաժամանակ նախազգուշացրել էր, որ նշված ժամկետում չվճարելու դեպքում գումարի բռնագանձումը կիրականացվի դատական կարգով: Այսինքն, ամեն ինչ արվել էր՝ ինչպես կարգն է:

Մեկ ամիս անց, սակայն, փակ բաժնետիրական ընկերության տնօրենից ստացվում է շրջակա միջավայրի պատճառված վնասի հաշվարկի՝ ընկերության կողմից արված տարբերակը, ըստ որի՝ պատճառված վնասը յոթ միլիոն դրամի էր: Բնապահպանական պետական տեսչության տարածքային բաժնի պետ Սուրեն Ստեփանյանն էլ, դուրս գալով օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, համաձայնել էր, եւ ՓԲ ընկերությունը պետական բյուջե մուծել էր շրջակա միջավայրին պատճառված վնասի միայն կեսը:

Սուրեն Ստեփանյանի արարքը քրեական օրենսգրքում կոնկրետ որակում ունի, եւ նա հայտնվել է քրեական պատասխանատվության ենթարկվելու փաստի առաջ:

Յոթօրինակ «ընկերասիրություն»

Նոյեմբերի 29-ին, կեսգիշերն անց, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնում էր, որ երկու երիտասարդ մտել են իր տուն եւ ծեծել իրեն՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Դեպքը Արարատի մարզի գյուղերից մեկում էր եղել: Մեկնած ոստիկաններին ծեծված քաղաքացին հայտնեց, որ «հյուրերը» համագյուղացիներ Արտակն ու Արսենն էին, իսկ թե ինչն էր պատճառը՝ չգիտեր:

Մինչ ժամանած «շտապօգնության» բրիգադը տուժողին բուժօգնություն էր ցույց տալիս, ոստիկանները ձեռնամուխ եղան դեպքի հանգամանքները պարզելու եւ կասկածյալներին հայտնաբերելու ուղղությամբ:

Ժամեր անց ե՛ւ կատարվածի հանգամանքներն էին ճշտվել, ե՛ւ կասկածյալներն էին հայտնաբերվել ու բերման ենթարկվել ոստիկանություն:

Պարզվում է՝ Արտակ Սարգսյանի ու Արսեն Մանուկյանի ընկերը՝ Սմբատ Նազարյանը, սիրահարված է տուժողի դստերը: Միակողմանի սեր էր, բայց համառ երիտասարդը շարունակում էր սիրահետել: Նույնիսկ խնամախոս էր ուղարկել, բայց աղջկա հայրը նրանց տնից դուրս էր արել:

Վիրավորված Սմբատը սիրտը բացել էր ընկերների մոտ: Մի երկու շիշ օղի էին խմել՝ հընթացս մտածելով հետագա քայլերի մասին: Ի վերջո, լուծումը գտել էին՝ փախցնել համառ աղջկան:

Որոշումը կայացրել, Սմբատին տուն էին ուղեկցել, իսկ իրենք գնացել էին պարզելու, թե ինչ իրավունքով են իրենց ընկերոջը նեղացրել:

«Համառ» տանտիրոջը ծեծելուց, մարմնական վնասվածք պատճառելուց բացի կոտրել էին նաեւ բակում կայանված նրա մեքենայի դիմապակին, իսկ երբ քնահարամ հարեւանները դիտողություն էին արել, հայհոյել էին նրանց ու ինքնագոհ հեռացել:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ տուժողին պատճառված մարմնական վնասվածքը թեթեւ աստիճանի էր, բայց նախաքննական մարմնի կողմից երիտասարդներին առաջադրված մեղադրանքն այնքան էլ թեթեւ չէ՝ քրեական օրենսգրքի 117 (դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելը), 118 (ծեծը), 185 (գույքը դիտավորությամբ վնասելը) եւ 258 (խուլիգանությունը) հոդվածների հատկանիշներով մեղադրանքներ:

Փաստով նախաքննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ահազանգից ժամեր անց

Հունվարի 3-ին, ժամը 21-ի սահմաններում, ոստիկանության Շենգավիթի բաժնում գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնում էր, որ ժամը 16.00-ից 21.00-ն ընկած ժամանակահատվածում, երբ ինքն աշխատանքի է եղել, Շահամիրյան 3 հասցեի իր բնակարանից գողություն է կատարվել:

Ոստիկանության Շենգավիթի բաժնից տուժողի նշած վայրն օպերատիվ խումբ մեկնեց: Դեպքի վայրի զննությամբ պարզվեց, որ մուտքի դուռը բացել են տեխնիկական միջոցների գործադրմամբ, հավանաբար՝ լինգով: Գողացել էին հեռուստացույց եւ համակարգչի մոնիթոր:

Ոստիկանները տուժողից հաղորդում վերցրին եւ գործի անցան: Ցանկալի արդյունքը երկար չսպասեցրեց: Ահազանգից ժամեր անց ոստիկանները հայտնաբերեցին գողությունը կատարած անձին:

Ֆուչիկի փողոցի բնակիչ, 43-ամյա Արթուր Դարբինյանն էր: Նա, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Շենգավիթի բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«Տեսանկարահանվել էր»

Հունվարի 8-ին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգած տղամարդը հայտնում էր, որ մեքենայի ապակին կոտրել ու գողացել են սրահի պայուսակը, որի մեջ եղել է անձնագիր ու փող: Ահազանգը տարածքային ենթակայության կարգով փոխանցվեց ոստիկանության Շենգավիթի բաժնի Չարբախի բաժանմունք:

Դեպքն Արարատյան փողոցում էր կատարվել: Ոստիկանության Չարբախի բաժանմունքի քրեական հետախույզները ժամերի ընթացքում տեսահսկող սարքի միջոցով պարզեցին անձի ինքնությունը:

Տեսագրությունում երեւացող տղամարդը, որ առաջին հայացքից, թվում է, ինչ-որ մեկին էր սպասում, աջ ու ձախ նայելով՝ իրականում հարմար պահ էր որսում առջեւի մեքենայի ապակին կոտրելու եւ գողություն կատարելու համար:

Հունվարի 9-ին՝ դեպքի հաջորդ օրը, հենց Չարբախում ապրող Վարազդատ Ավագյանը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Չարբախի բաժանմունք:

35-ամյա Ավագյանը խոստովանել է, որ գողությունն ինքն է արել:

Քննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Հունվարի 15-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի 1-ին գումարտակի 2-րդ վաշտի ծառայողները Երեւանի Քաջազնունու փողոցում ծառայություն իրականացնելիս ոստիկանության Կենտրոնական բաժին են ներկայացրել 50-ամյա Աբել Կ.-ին, որը 2014 թ.-ից ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի երկրամասի Կարասունսկի շրջանի ՆԳՆ կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 159 հոդվածի 3-րդ մասի մեղադրանքով (խարդախությունը):

◆

Ոստիկանության Շենգավիթի ՔՀԲ ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հունվարի 15-ին Նոր Խարբերդի Ձորի 3-րդ փողոցից բերման է ենթարկվել 26-ամյա Արսեն Մ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի (գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության ՔՀԳՎ եւ Նոր Նորքի բաժնի ՔՀԲ ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, հունվարի 15-ին Երեւանի Նանսենի փողոցից բերման են ենթարկել 32-ամյա Զավեն Գ.-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 179 հոդվածի 1-ին մասի (յուրացնելը կամ վատնելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՔՀԲ ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ հունվարի 15-ին կամավոր ոստիկանության Մաշտոցի բաժին է ներկայացել 48-ամյա Աշոտ Հ.-ն, որը 2018 թ. հունիսից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի (խարդախությունը) եւ 34-178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի (խարդախության փորձը) մեղադրանքներով:

◆

Ոստիկանության Գյումրիի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հունվարի 14-ին Մոսկվա-Գյումրի չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Շիրակ» օդանավակայանից բերման է ենթարկվել 66-ամյա Եղիշե Ա.-ն, որը 2015 թ. հոկտեմբերից ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Ստեփանավանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հունվարի 14-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանում հայտնաբերվել եւ «Նուբարաշեն» ՔԿՀ է տեղափոխվել 50-ամյա Գրիգոր Մ.-ն, որը 2015 թ. հունիսից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 258 հոդվածի (խուլիգանությունը) 3-րդ մասի 1-ին կետի եւ 316 հոդվածի 2-րդ մասի (իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) մեղադրանքներով:

◆

Ոստիկանության Բաղրամյանի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հունվարի 12-ին Արմավիրի մարզի Դալարիկ գյուղում հայտնաբերվել եւ ոստիկանության Բաղրամյանի բաժին բերման է ենթարկվել 22-ամյա Նարեկ Ս.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) 3-րդ մասի մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Լեռ, ճապոնիա / Հռոմեացի զորավար
Թակարդ / Թեք գիծ
Լեհական քաղաք / Հանքանյութ
Հայկ. տառ / Ալեքսանդր ...
Հովանավոր / Դեղձ, սալոր
Արվեստի ճյուղ / Խիստ շոգ
«Արտույտների ...ը»
Փոքրատառ / Միրգ, նաեւ թռչուն
Չկան տեսակ / Հովհաննես ...
Նոտա / Ուրուգվայցի գրող, «Անակոնդա»
«Կիբեռնետիկա»
«Ռուսական կայսրության ...ը»
Հայազգի խորհրդ. բեմանկարիչ
«Տիտանիկ»
Ծառերի ուտելի պտուղ
Ինքնաթիռ
Խոճկոր, ուլ
Դեղին ջրաշուշան
Երկնոլորտի կետ / Բաժին
Յոթ ...ից այն կողմ
Չակ ...
... Մոնտան
Գ. Դանելիա / Ոգելից խմիչք
... Պոդդուբնի
«Սկավառականետորդը»
Խորհրդ. ավտոմեքենա
Հույն ճարտարապետ, Պարթենոն
Փոքր մոլորակ
Կաղնի / Լեհ բանաստեղծ
«... Գյունտ» / Դրամի որոշ քանակ
Դու, նա
Բանջար
Եռանկ. ֆունկցիա
Մեր տոմարի 7-րդ ամիսը
Իսպան. նավահանգիստ
Զինվ. կոչում / Ֆրանսիացի ֆուտբ.
Հայկ Բժշկյան
Անթիլյան կղզի / Մորի
Շինանյութ
... Ամարա / Անդրկովկաս. պար
Լեսոթո / Անդունդ
Արտակարգ իրողութ. / Աքրա
Շվեյցար. փիլիսոփա
Հսկա մողես
Խտալ. քանդակագործ / Գետ, Ֆրանսիա
Սննդամթերք
Սիլվի ... / Հայկ. նոտագրնշան
Արեւել. նվագարան / Նիկոլայ
Աֆրիկյան երկիր
Գառան մորթի / Ջանք
Ծառ / Չկնկիթ / Հոլ
Հրեա գրող / Ողբ
Թաղիք
Գոբի, Ատակամա
Իտալացի ֆուտ. մարզիչ
Թրի բռնատեղ
Կատվազգի կենդանի
... - Դոս
Ուսի ետեւը
Կրակ
Մտրակ
Շրջան, երկրամաս / Ինքնավար հանր., ՌԴ
Ռազմի աստված
Ջրալի ճաշ
Վոլգայի վտակ
Կրոնական պահեցողություն
Օֆենբախ, օպերա
Խոսքի մաս / Ամոն
Լատվիայի դրամ. միավոր
Հավազգի խոշոր թռչուն
Երթեւեկության ...
Անհայտ թիվ
Նախադասութ. անդամ
Թռչուններ որսալու ցանց

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

Խոյ - Աշխատանքի վայրում անախորժություն կունենաք, որի բարեհաջող ավարտը կախված է ձեր իրազեկված լինելուց:

Ցուլ - Աշխատանքային հարաբերություններում եղեք զգույշ: Անձնական հարաբերություններում ընդունեք փոխհամաձայնության սկզբունքը:

Երկվորյակ - Զգույշ եղեք գործնական բանակցություններում: Անավարտ աշխատանքը հասցրեք ավարտին:

Խեցգետին - Կենտրոնացրեք մտքերը. հաճախ սեւեռվում եք մանրուքների վրա՝ բաց թողնելով կարեւորը:

Առյուծ - Կարեւոր տեղեկությունը կօգնի հաղթահարելու աշխատանքային խոչընդոտները:

Կույս - Եթե կենտրոնանաք աշխատանքի վրա, ապա մոտ ժամանակներում շռայլորեն կպարգեւատրվեք:

Կշեռք - Ճակատագիրը պատրաստ է ձեզ ուրախացնելու, միայն թե ընձեռեք նրան այդ հնարավորությունը:

Կարիճ - Շփումներում խստապահանջությունը անչափ պատեհ է: Մի՛ եղեք կտրուկ, ականջ դրեք խղճի ձայնին:

Աղեղնավոր - Նոր ծանոթությունը հեռանկարային է: Ինքնավստահ եք, համոզված՝ ձեր յուրաքանչյուր քայլում:

Այծեղջյուր - Շաբաթվա ավարտին սպասվում է հանդիպում ռոմանտիկ զարգացումով: Հիշեք, որ միայնակ եք եւ գործելու եք միայնակ:

Ջրհոս - Մի՛ թերագնահատեք ձեր կարողությունները: Մի՛ չարաշահեք ձեր նկատմամբ վստահությունը:

Ձուկ - Պետք չէ գերագնահատել ուժերը եւ գնալ չարդարացված ռիսկի: Այն, ինչ թվում է սպառված, իրականում նոր է սկսվելու:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.f2-g3 h2:b4 2.a3:g5 x

Խնդիր N2 1. b2-a3 h2:b4 2.a3:e7 f8:d6 3.h6:a7x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 17.01.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6870:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: